Մարզպետ Սարգիս Սահակյանի ելույթը Ուջանում Անդրանիկ Օզանյանի ծննդյան 150 ամյակի առթիվ

Հարգելի հյուրեր

Այսօր լրանում է հայ զորահրամանատար, պետական գործիչ, ֆիդայապետ, հայ ազատագրական շարժման գործում մեծագույն դեր կատարած, Հայաստանի և Բուլղարիայի ազգային հերոս Անդրանիկ Օզանյանի ծննդյան 150- ամյակը:

Անդրանիկը, ով 1899 թվականին. Աղբյուր Սերոբի սպանությունից հետո ընտրվեց գործող ֆիդայական խմբերի ընդհանուր առաջնորդ, դարձավ Արցախյան պատերազմի կամավորականների՝ Հայաստանի նորանկախ ֆիդայիների շարժման խորհրդանիշը: Ինչպես հետագայում պետք է Խաչիկ Դաշտենցն ասեր՝ մենք բոլորս պետք է մի օր նրանց ըմբոստ ճակատները համբուրենք: Բոլոր այն մարդկանց, ում համար թանկ է մեր երկրի անկախությունն ու ազատագրական պայքարը, Զորավար Անդրանիկը և մեր մյուս ֆիդայիները առաջնային կերպարներ են:

Անդրանիկ Թորոսի Օզանյանը ծնվել է 1865 թվականի փետրվարի 25, Շապին-Գարահիսարում: Մահացել է 1927 թվականի օգոստոսի 31-ին, ԱՄՆ-ում (Սակրամենտոյի մոտ): Թաղվել է Ֆրեզնոյում, քանի որ Խորհրդային Միությունը չթույլատրեց նրա մարմինը տեղափոխել Խորհրդային Հայաստան: 1928-ին նրա աճյունը հողին է հանձնվել Փարիզի Պեր Լաշեզ գերեզմանատանը: Այնուհետև, 2000 թվականին մեծ զորավարի աճյունը տեղափոխվել է Երևան և ամփոփվել Եռաբլուրում:

Պատանեկան տարիներից Անդրանիկը հյուսնություն է արել, բայց տարվելով Արևմտյան Հայաստանում ծավալվող ազգային-ազատագրական շարժումներով՝ շուտով հյուսնի ուրագը փոխարինում է հրացանով: 1889թվականին թուրք ենիչերիի սպանության մեղադրանքով ձերբակալված, սակայն բանտից փախած Անդրանիկը շուտով միանում է Աղբյուր Սերոբի խմբին և զբաղվում Արևմտյան Հայաստան զենք-զինամթերքի առաքմամբ ու ֆիդայական խմբերի զինմամբ: Արդեն իսկ ակնհայտ է, որ Անդրանիկը տաղանդավոր,

ճիշտ և ժամանակին տեղանքում կողմնորոշվող զորապետ էր, որի ռազմական հանճարը չեզոքացնում էր թշնամու քանակական գերակայությունը:

1904 թվականին Անդրանիկը ղեկավարեց Սասնո ապստամբությունը: 1912 -ին իր ռազմական հանճարով նա փայլեց Բալկանյան երկրորդ պատերազմում, երբ Գարեգին Նժդեհի հետ հայ կամավորական զորաջոկատ կազմեց ու նետվեց պատերազմի թուրքերի դեմ: Իր զորաջոկատով Մարիցա գետի ափին ջարդելով թուրքական մեծաքանակ բանակը՝ նա Բուլղարիայի կառավարության կողմից արժանացավ բարձրագույն պարգևի՝ «Ոսկե խաչի»:

Անդրանիկին մեծ փառք բերեց Մշո Առաքելոց վանքի կռիվը, որը փայլուն ներկայացված է Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարների կանչը» վեպում: Նկարագրվում է, թե ինչպես Օսմանյան 6000-անոց բանակը չկարողացավ ընկճել Անդրանիկի 30 քաջերին, որոնք ճեղքեցին թշնամու օղակն ու հեռացան:

Ֆիդայական շարժման պատմության մեջ Անդրանիկի բացառիկությունը այլ հզոր անունների կողքին կայանում է նրանում, որ առանց ֆիդայական շարժման հիմքում լինելու, նա եղավ Անդրանիկ: Եղավ Անդրանիկ՝ հաշվի առնելով, որ նրանից առաջ եղել են Արաբոն, Աղբյուր Սերոբը, Հրայր Դժոխքը:

Անդրանիկ Օզանյանը մասնակցեց բալկանյան պատերազմին, երբ բուլղարացիները ճակատամարտ էին մղում թուրքերի դեմ՝ թուրքական լծից ազատվելու համար: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ նա հայկական 7 կամավորական գնդերից առաջինի հրամանատարն է եղել: Սա եզակի դեպք է, երբ ֆիդայական շարժման ղեկավարը հետագայում նաև կանոնավոր բանակ ղեկավարեց և հասավ գեներալի կոչման:

Հայոց ցեղասպանությունից հետո նա միակ զորավարն էր, ով իր զորախմբով առաջնորդում էր գաղթականների խմբերը դեպի Արևելյան Հայաստան և եղեռնից մազապուրծ եղած մարդկանց բերում-հասցնում էր Հայաստան:

Անդրանիկը 20-րդ դարի սկզբին հայ ժողովրդի պատմության մեջ ունեցավ նույն դերը, ինչ սպարապետ Վարդան Մամիկոնյանը՝ 5-րդ դարում: Նա այն հերոսներից է, ով

օտար, թշնամական տարրերից մաքրեց հայությունը, որ գաղթական հայը ապրելու տեղ ունենա:

Անդրանիկը գնահատանքի տարբեր փուլերով է անցել. 1920-ական թվականներից մինչև 1960-ական թվականները բացասական հայացք է եղել նրա նկատմամբ: Հետո ամեն ինչ իր հունի մեջ ընկավ: 1963 թվականին հայ մեծ բանաստեղծ Պարույր Սևակը, ում ձեռքն էր ընկել Անդրանիկի զինվոր Հակոբ Հակոբյանի (սասունցի Ծուռ Հակոյի) մեքենագիր գիրքը, Անդրանիկին անվանեց իր սերնդին անծանոթ, մեծ ու սուրբ քաջ: Ահա թե ինչ է գրում նա.

«Ես անհարմար եմ զգում, ուղղակի ամաչում եմ մեծարանքի որևէ խոսք ասել Անդրանիկի հիշատակին: Այս մեծ ու սուրբ քաջի հանդեպ բոլորովին անպարտ ու անմեղ՝ ես ինձ անձամբ պարտավոր ու մեղավոր եմ զգում այնքան, որ մեծարանքի ամեն խոսք ինձ թվում է սեփական հանցագործությունից հետո ուրիշի բերանով «մեղա» ասելու պես բան: Բայց պիտի որ ասվի այդ «մեղան» և ասվի ոչ թե խոսքով, այլ գործով, այլ գործնականորեն ու հետևողականորեն մեր նորագույն պատմության բոլոր աղավաղումները շտկելով,,:

Այսօր արդեն վստահաբար կարող ենք ասել, որ եթե չլիներ ֆիդայական շարժումը, չլիներ Անդրանիկի ըմբոստ և հրեղեն ոգու խորհրդանիշը, չէր լինի նաև Արցախյան ազատամարտը, չէր լինի Հայաստանի անկախությունը: